ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ПУБЛИКАЦИИ

ՊԱՐԹԵՎՔԸ ԸՍՏ ՊՏՂՈՄԵՈՍԻ

Պատմաաշխարհագրական կարևոր աղբյուր է Կղավդիոս Պտղոմեոսի (83—161) աշխարհագրական երկը, որի առաջին գրքի տեղեկությունները վերաբերում են քարտեղագրության ընդհանուր հիմունքներին, իսկ մյուս գրքերը՝ Եվրոպայի, Լիբիայի (Աֆրիկա) և Ասիայի երկրներին (Κλαυδίου Πτολεμαίου Γεωγραφικης Ὑφηγήσεως, *տե՛ս* Claudii Ptolemaei Geographia, ed. C. F. A. Nobbe, Lipsiae, 1843—1845, *այսուհետև՝* Ptol.)։ *Այդ երկրների թվին է պատկանում Պարթևքը, որի մասին Պտղոմեոսի (VI. 5) հաղորդած տեղեկությունները բերում ենք ստորև՝ բնագրի թարգմանությամբ, ծանոթագրություններով և քարտեզով։*

Պատմ. գիտ. թեկնածու Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Παρθίας θέσις.
[Ἀσίας πίναξ ε΄.]

§ 1. Ἡ Παρθία περιορίζεται ἀπὸ μὲν δύσεως τῷ ἐκτεθειμένῳ Μηδίας μέρει, ἀπὸ δὲ ἄρκτων Ὑρκανία χώρα κατὰ παράλληλον γραμμὴν τὴν διὰ τοῦ Κορώνου ὄρους ἕως τοῦ πρὸς αὐτὸ πέρατος, οὗ ἡ θέσις ἐπέχει μοίρας $\overline{\text{ρα}}$ $\overline{\text{λθ}}$ ἀπὸ δὲ ἀνατολῶν Ἀρεία κατὰ τὴν ἀπὸ τοῦ εἰρημένου πέρατος γραμμὴν διὰ τοῦ Μασδωρανοῦ ὄρους μέχρι πέρατος, οὗ ἡ θέσις ἐπέχει μοίρας $\overline{\text{ρα}}$ λ΄ $\overline{\text{λγ}}$ ἀπὸ δὲ μεσημβρίας τῇ Ἐρήμῳ Καρμανία κατὰ τὴν ἐπιζευγνύουσαν τὰ ἐκκείμενα πέρατα. διὰ τῆς τοῦ Παρχοάθρα ὄρους γραμμῆς ἕως $\overline{\text{ρα}}$ $\overline{\text{λγ}}$, καλεῖται δὲ τῆς Παρθίας ἡ μὲν παρὰ τὴν Ὑρκανίαν Κομισηνή, ἡ δὲ ὑπὸ ταύτην Παρθυηνή. εἶτα ἡ Χοαρηνή, καὶ ἡ Παραυτικηνή, μεθ᾽ ἣν παρὰ τὴν Καρμανίαν ἡ Ταβικηνή, παρακειμένους ἔχουσα τοὺς Σωβίδας.

Պարթևի տեղադրությունը
[Ասիայի V քարտեզ]

§ 1 Պարթևքը[1] *սահմանագծվում է արևմուտքից՝ նկարագրված Մեդիայի մասով, հյուսիսից՝ Հյուրկանիա երկրով, այն զուգահեռականի գծով, որը անցնում է Կորոնոս*[2] *լեռնապարով մինչև նույնի ծայրակետը, որը տեղադրված է 101°, 39°, արևելքից՝ Արիքով, նշված ծայրակետից Մասդորանոս*[3] *լեռնապարով անցնող գծով մինչև այն ծայրակետը, որը տեղադրված է 101°30′, 33°, հարավից՝ Անապատային Կարմանիայով, հիշատակված ծայրակետերը միացնող Պարխոաթրա*[4] *լեռնապարով անցնող գծով մինչև 101°, 33°։ Հյուրկանիային հարող Պարթևքի մասը կոչվում է Կոմիսենե*[5]*, դրանից ներքև՝ Պարթյուենե*[6]*, ապա Խոարենե*[7] *և Պարաուտիկենե*[8]*, որից հետո Կարմանիայի մոտ՝ Տաբիկենե, որի կողքին են Սոբիդները*[9]։

§ 2. Πόλεις δὲ εἰσι τῆς Παρθίας καὶ κῶμαι αἵδε·	§ 2. Պարթևքի քաղաքներն ու գյուղերն են.
Ἀμβρωδάς	94°30′, 38°30′ Ամբրոդաքս[10]
Οἰνουνία (ἢ Σινουνία)	95°, 38°40′ Օյնունիա[11] (կամ Սինունիա)
Καρίπρακα ἄκρα	97°15′, 38°40′ Կարիպրակա ակրա[12]
Ῥόαρα	98°30′, 38°15′ Հրոարա[13]
Σοῦφθα	100°, 38°30′ Սուփթա[14]
Ἀρακίανα	94°15′, 38° Արակիանա[15]
Δοροομάνα	94°15′, 37°40′ Դորդոմանա[16]
Ἑκατόμπυλον Βασίλειον	96°, 37°50′ Հեկատոմպյուլոն Բասիլեոն[17]
Σίνδαγα	96°10′, 37° Սինդագա[18]
Πάρβαρα	98°50′, 37°10′ Պարբարա[19]
§ 3. Μυσία	100°30′, 37°30′ § 3. Մյուսիա[20]
Χάραξ	94°15′, 36°40′ Խարաքս[21]
Ἀπάμεια	94°15′, 36° Ապամեա[22]
Ἄσπα	95°20′, 33°20′ Ասպա[23]
Σήμινα	96°, 36°40′ Սեմինա[24]
Μαρίχη	98°, 36°40′ Մարիխե[25]
Τασταχή	99°, 36°20′ Տաստախե
Ἀρμιανα	101°, 36°10′ Արմիանա[26]
Χόαρα	95°15′, 35°10′ Խոարա[27]
§ 4. Πασακαρτία	94°15′, 35°15′ § 4. Պասակարտիա[28]
Ῥοῦδα	95,° 35° Հռուդա[29]
Σιμψιμοῦα	96°30′, 35°40′ Սիմփսիմիդա
Ἀρτάκανα	96°, 34°30′ Արտականա[30]
Ἄπφα	98°, 35°20′ Ապֆա
Ῥάγαια	98°20′, 34°20′ Հռագայա[31] (Ռագա)

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Պտղոմեոսը դրում է Պարթևքի գրաված դիրքի, այն կազմող երկրամասերի և այնտեղ գտնվող բնակատեղիների մասին։ Պտղոմեոսի նկարագրած սահմաններում, որքանով կարելի է դատել Ռագա և Խարաքս (Քարակ) քաղաքների հիշատակությունից, Պարթևքի արևմուտքում էր գտնվում Իսիդոր Քարակացու հիշատակած Ռագիական Մեդիան (Ῥαγιανὴ Μηδία, Isid., VII)։ Հյուսիսում այն սահմանակից էր Վրկանին (Հյուրկանիա), արևելքում՝ Արիքին, իսկ հարավում՝ Անապատային Կարմանիային։ Համեմատությունը Ստրաբոնի երկի համապատասխան հատվածների հետ ցույց է տալիս, որ Պտղոմեոսը Պարթևքը նկարագրում է այն տարածքով, որը Ստրաբոնը նշում է իր երկի XI (9. 1) գրքում, ուր Պարթևքի մայրաքաղաքն է հիշատակված Հեկատոմպյուլոսը։ Չհամաձայնվելով Ռ. Ֆրայի այն տեսակետի հետ, որ Հեկատոմպյուլոսը Պարթևքի մայրաքաղաքն էր դարձել մինչև Անտիոքոսի արշավանքը (R. Fry, The Heritage of Persia, New York, 1963, p. 266, n. 23), *Ջ. Հանսմանը նշում է, որ Արշակունիները քաղաքական ասպարեզ իջնելու վաղ ժամանակաշրջանում չէին կարող թողնել ավելի հյուսիսում գտնվող, լեռներով պաշտպանված իրենց հայրենի երկրամասը (նկատի ունի Պարթյուենեն), մանավանդ որ, ինչպես երևում է Պոլիբիոսի հաղորդումից* (Polyb., X, 28—30), *Հեկատոմպյուլոսը այնքան անպաշտպան էր, որ նրանք այնտեղից առանց դիմադրության նահանջեցին Անտիոքոսից հետապնդվելով։ Հեկատոմպյուլոսը Պարթևքի մայրաքաղաքն էր դարձել Նիսայից հետո՝ մ. թ. ա. III դարի վերջում, երբ Անտիոքոս III-ի (մ. թ. ա. 223—187) արշավանքից հետո, ըստ Հուստինոսի* (Just., XLI, 5), *պարթև Արշակունիները Անտիոքոսի դաշնակիցները դարձան (տե՛ս* J. Hansman, The Problems of Qumis, „Jour-


ΚΑΣΠΙΑ
ΘΑΛΑΣΣΑ
Νισαία
ΠΑΡΘΥΗΝΗ
ΑΣΤΑΥΗΝΗ
(Dvin-)Ἀσαάκ
Ὑρκανία
ΥΡΚΑΝΙΑ
Ἀρακίανα
Ἀμβρωδάξ
ΠΑΡΑΥΤΙΚΗΝΗ
(Tabas)
Πάρραρα
Ῥοῦδα
(Armian)
Ἀρτάκανα
Ἑκατόμπυλος
Ῥάγαια
Χαραξ
ΚΑΣΠΙΑΙ ΠΥΛΑΙ
Ἀπάμεια
Σήμινα
ΚΟΜΙΣΗΝΗ
ΧΟΑΡΗΝΗ
ΜΗΔΙΑ
Καρίπρακα ἄκρα (?)
ΕΡΗΜΟΣ ΚΑΡΜΑΝΙΑ
ΑΡΕΙΑ
ΠԱՐԹԵՎՔԸ ԸՍՏ ՊՏՂՈՄԵՈՍԻ
(ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՎՐԱ)
Քարտեզի հեղինակ Է. Լ. Դանիելյան

nal of the Royal Asiatic Society", London, 1968, 3, 4, p. 112, այսուհետև՝ JRAS)։ Միհրդատ I-ի (մ. թ. ա. 171—138) կողմից Մեդիայի (Մարաստան) նվաճումից հետո (մ. թ. ա. II դարի 40-ական թթ. առաջին կես) Պարթևական պետության արքայանիստ քաղաք դարձավ նաև Էկբատանան (տե՛ս N. C. Debevoise, A Political History of Parthia, Chicago, 1938, pp. 18—23: Г. А. Кошеленко, Монетное дело Парфии при Митридате I, ИА АН СССР, «Нумизматика и эпиграфика», т. X, 1972, стр. 98: Նույնի՝ Греческий полис на эллинистическом Востоке, М., 1979, стр. 272; J. Hansman նշվ. աշխ., էջ 113)։

Հեկատոմպյուլոսը իր մայրաքաղաքային դերը աստիճանաբար կորցրեց Միհրդատ II-ի (մ. թ. ա. 123—87 թթ.), կամ նրա հաջորդի ժամանակ (J. Hansman, նշվ. աշխ., էջ 113—115)։ Իսկ Քտեսիփոնը (Տիզբոնը) վերջնականապես Պարթևքի մայրաքաղաքը դարձավ մ. թ. ա. I դարում (Plin., VI, 30. Tacit., Annal., VI, 26. Ammian. Marc., XXIII, 6). այս հարցի մասին տե՛ս նաև՝ Б. Я. Ставиский. Между Памиром и Каспием, М., 1966, стр. 142 և այլն)։ Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Պարթևքի մասին Պտղոմեոսի հաղորդած տվյալները արտացոլում են մ. թ. ա. III դարի վերջերից մինչև մ. թ. ա. II դարի կեսերն ընկած ժամանակաշրջանում Պարթևական պետության տարածքային վիճակը։ Հետաքրքիր է նշել, որ Անանիա Շիրակացին, վկայակոչելով Պտղոմեոսին, խոսում է Պարթևքի այս տարածքի մասին, միևնույն ժամանակ բերելով տվյալներ, որոնք վերաբերում են Պարթևական (այնուհետև Սասանյանների) պետության՝ ավելի ուշ ժամանակաշրջանում զբաղեցրած, ընդարձակված տարածքին։ Անանիա Շիրակացին գրում է. «Աշխարհ Ասիոյ՝ Արիք են, յելից կալով Մարաց եւ Պարսից, եւ ծգին մինչեւ ի Հնդիկս, յերի Վրկանի եւ մասին Սկիւթայ։ Ունին աշխարհս մեծասան. յորում Կարճաբեր աշխարհն, Դէմոն և Կրման Ջերմ, Կրման Անապատ, զոր Պարսիկք Յուրտ Կրման կոչեն. որոյ ի հիւսիսոյ Պարթեւաց աշխարհն, ասէ Պտղոմէոս՝ ընդ մէջ Յուրտ Կրմանայ եւ Վրկանի. բայց Պարսիկք կոչեն այժմ յաղագս Բահլ քաղաքի զնա Բահլի-Բամիկ, որ է Բահլ-Առաւատին. եւ աստուածային գիրն զամենայն Արեաց աշխարհն Պարթեւս կոչէ. ինձ թուի վասն թագաւորութեան ի նոցանէ լինելոյ։ Բայց Պարսիկք կոչեն զկողմանս զայս Խորասան, այսինքն է արեւելեայ. յորում ասեն զաշխարհս զայս. Կոմշ, Վրկան, Ապրշահր, Մրվ, Մառտ, Հրեւ, Կաղշան, Գոզկան. յորում լինի ձի արքունական, Դզի-բոյին, մինչեւ ցգետն զոր կոչեն Արանգ...» («Աշխարհացոյց», Վենետիկ, 1881, էջ 41։ Ճշտված բնագիրը բերում ենք ըստ J. Marquart, Eransahr nach der Geographie des Ps. Moses Xorenaci, Berlin, 1901, S. 11—12)։

Պտղոմեոսը Էկբատանան և Քտեսիփոնը համապատասխանաբար հիշատակում է Մեդիայում (VI, 2, 14) և Ասորեստանում (VI, 1, 3)։ Ուրեմն, Պտղոմեոսի նկարագրած Պարթևքի տարածքը հետագայում, ամբողջ Պարթևական պետության կազմի մեջ, պետք է համապատասխաներ մի վարչաքաղաքական միավորի։ Չէ՞ որ նա նկարագրում է նաև հետագայում առավելագույն տարածքը զբաղեցրած Պարթևական պետության այլ երկրամասերը։ Դրան համահնչյուն է Պլինիոսի այն հաղորդումը, որ Պարթևական պետությունը բաղկացած էր 18 երկրամասերից («Բնագավորություններից», Plin., VI, XXIX, 112—113)։ Պարթևական պետության հետագայի այս կազմի մասին են վկայում Ստրաբոնը (Նույն՝ XI գրքում (9, 2), նաև հիշում է, որ իր ժամանակ պարթևների երկիրը արդեն ընդարձակվել էր, իսկ XVI (1, 16) գրքում տվյալներ է բերում դրա մասին, նշելով, որ պարթևների ձմեռային մայրաքաղաքն էր Քտեսիփոնը, իսկ ամառայինը՝ Էկբատանան), Խարադ Քարակացին (Isid., I—XIX. նա Պարթևական պետության սահմանները ցույց է տալիս երկարաձգված՝ Միջագետքից մինչև Հնդկաստանին սահմանակից շրջանները) և այլ հեղինակներ։ Մայրաքաղաքի (Նիսա, Հեկատոմպյուլոս, Էկբատանա, Քտեսիփոն) տեղափոխումը արևմտյան ուղղությամբ տեղի էր ունենում Արևմուտքը Արևելքի հետ կապող գլխավոր («մետաքսի») ճանապարհով, որի արևմտյան ծայրակետերից էր Ռեկեմը՝ Պետրան (տե՛ս J. I. Miller, The Spise Trade of the Roman Epire, Oxford, 1969. И. Ш. Шифман, Набатейское государство и его культура, М., 1976, стр. 8—9)։

2 Κερωνος է կոչվել Էլբուրս լեռնաշղթայի մի մասը։

3 Համապատասխանում է այժմյան Մուզդերանին։ Այստեղ կան նաև նույնանուն քաղաք և լեռնանցք (1059 մ)։

4 Ստրաբոնը նշում է, որ Պարախոաթրա (Պարխոաթրա) լեռը ձգվում է Հայաստանից մինչև Արիք (Strabo, XI, 8, 1, 8, 12; 4, 14, 1)։ Ուրեմն, ըստ անտիկ աշխարհագետների, այդ մի լեռնասիստեմ էր, որը ձգվելով մինչև «Կովկասյան» (Strabo, II, 1, 2, XV, 1, 56, այժմ՝ Հինդուքուշի) լեռները, իր մեջ ընդգրկում էր բազմաթիվ այլ լեռնաշղթաներ։ Ամմիանոսը Պարթևքում Choatres անունով գետ է հիշատակում (Ammian Marc., XXIII 6, 43)։

5 Անտիկ հեղինակների հիշատակած Կոմիսենե երկրամասի անվանման հայերեն ձևն է «Կոմշ» («Շիրակացու մատենագրությունը», աշխ. Ա. Աբրահամյանի, Երևան, 1944, էջ 352։ «Պատմություն Սեբէոսի», աշխ. Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 98 և 101, հմմտ. «История императора Иракла, СПб, 1862, էջ 150 և այլն), իսկ արաբերենը՝ Kūmish (*Komish). (տե՛ս Hudūd al-'Ālam („The Regions of the World"), transl. and explained by V. Minorsky, Oxford, 1937, pp. 36, 135, 387; В. В. Бартольд, Работы по исторической географии и истории Ирана, Соч., т. VII, М., 1971, стр. 122–129).

6 Παρθία-ն և Παρθυηνή-ն տարբեր աշխարհագրական հասկացություններ են։ Ըստ անտիկ հեղինակների, առաջինը, տարբեր ժամանակներում, ընդհանրապես Պարթևական պետության էր համապատասխանում, իսկ երկրորդը պարթևների բնակեցման բուն երկրամասն էր՝ Նիսա կենտրոնով (М. Е. Массон, Городища Нисы в селении Багир и их изучение, „Труды ЮТАКЕ", т. I, Ашхабад, 1949, стр. 42; Г. А. Кошеленко, Культура Парфии, М., 1966, стр. 12)։ Պարթյունների կապակցությամբ Իսիդոր Քարակացին նշում է. «Այնուհետև Պարթյունենե, 25 սքոյնոս, որում լեռնահովիտ, 6 սքոյնոսից հետո Պարթավնիսա քաղաքը, այնտեղ են գտնվում արքայական գերեզմանները։ Հույները այն անվանում են Նիսա։ Հետո 6 սքոյնոսից Գաթար (Γάθαρ) քաղաքը։ Ապա Սիրոկ (Σίρωκ) քաղաքը 5 սքոյնոսից» (Isid., XII)։

7 Այս տեղանունը, որը հիշատակում են նաև այլ անտիկ հեղինակներ, ծագում է kh^{v}ar (կամ hvar)-ից, որը նշանակում է «արև» (տե՛ս Glossary of Pahlavi Vendidat by D. D. Kapida, Bombay, 1953, p. 212, այսուհետև՝ GPV)։ Արաբ հեղինակների մոտ այն հանդիպում է Khuvār (Khwār) ձևով (տե՛ս Hudūd al-'Ālam, էջ 36, 132, В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 130)։ Այս տեղանունն այլ կերպ է բացատրում Վ. Տոմաշեկը (Pauly, Realencyclopädie der Classische Altertumwissenschaft neue bearbeitung begonnen von G. Wissowa, Stuttgart, 1899 (1970), III$_2$, S. 2353—2354, այսուհետև՝ PW)։

8 Բացի այս Παραυτικηνή-ից Պտղոմեոսը մեկ այլ տեղ հիշատակում է Παραιτακηνή (Ptol., VI, 4. 3)։ Վերջինս Պտղոմեոսը նշում է որպես երկրամաս (այն համապատասխանում է Հերոդոտոսի (Herod., I, 101, հմմտ. Strabo, XI, 13, 6) կողմից հիշատակված նույնանուն ցեղի բնակեցրած տարածքին), որը գտնվում էր այժմյան Սպահանի շրջանում (տե՛ս նաև J. Marquart, Eransahr, S. 28)։ Իսկ Իսիդորի հաղորդումը Παραιτακηνή ցեղանվան-տեղանվան մասին վերաբերում էր այդ ցեղի զբաղեցրած տարածքին Պարթևաստանի հարավ-արևելյան մի շրջանում, որը նա անվանում է նաև Σακαστανή Σακῶν Σκυθῶν (Isid. XVIII). Նշենք, որ Պլինիոսը նույնպես հիշատակում է Paraetaceni անունը կրող երկրամասը, որն ըստ նրա գտնվում էր Պարթևքի և Արիքի միջև (Plin., VI, XXIX, 116)։ Այս ցեղանվան-տեղանվան ծագումը Վ. Վ. Բարտոլդը բխեցնում է pourula, սանսկրիտ. parvata («լեռներ») բառից (В. В. Бартольд, հ. VII, էջ 265)։

Պտղոմեոսի աշխատության անգլերեն հրատարակությունում (Geography by Claudius Ptolemy, ed. by E. L. Stevenson, New York, 1932, p. 136) Παραυτικηνή-ն սրբագրված է Par[t]auticena։ Վերջինս համապատասխանում է ասորական աղբյուրներում հիշատակվող Partukka-ին, որը ինչպես ենթադրում է. Ի. Մ. Դյակոնովը, իրանական Parθava-ն է (И. М. Дьяконов, История Мидии, М.-Л., 1956, стр. 262–263, հմմտ. D. J. Wiseman, The Vassal Treaties of Esarhaddon, „Iraq", vol. 22, London, 1958, p. 11)։ Եթե Par[t]auticena-ն համապատասխանում է Partukka-ին, ուրեմն Պտղոմեոսի երկում նման սրբագրման կարիք չկա, քանի որ նա առանձին հիշատակում է թե՛ Παρθία-ն և թե՛ Παρθυηνή-ն։

9 Նշված է, որ Տաբիկենեն և դրա շրջանում բնակվող սոբիդների ցեղը գտնվում էին այժմյան Թեբես (կամ Tabas) քաղաքի տեղում (PW, III A$_1$, 1927 (1972), էջ 770)։

10 Ըստ երևույթին համապատասխանում է այժմյան Ամրուդակ բնակավայրին։ Ἀμμοδάκες անունով բնակավայր Պտղոմեոսը հիշատակում է նաև Արեայում (Արիք) (Ptol., VI, 17, 5)։ Վ. Տոմաշեկը անվան հիմքում ընկած է համարում պարսկերեն amrôd (dim. amrôdak), դերմ. „Birnbaum" բառը (PW, I_2, 1894 (1958), p. 1808)։ Եթե այդ ճիշտ է, ապա նման-օրինակ տեղանուն հիշատակվում է նաև Հայաստանում, օրինակ՝ Տանձուտ։

11 Ամմիանոսը նույնպես Պարթևքում հիշատակում է Oenunia (Ammian. Marc., XXIII, 6, 43)։

12 Καρτραλα ἄκρα տեղանվան զուգահեռն է հանդիսանում Հայաստանի Մարդաղի գավառի Սևուկ բերդակ (Սև քար բերդ) տեղանունը։

13 Ῥόαρα-ն բաղկացած է ῥοα և ρα բառերից, որոնցից առաջինը ῥοή-ի դորիական ձևն է և նշանակում է «գետ, հոսանք» (Greek-English Lexicon, compiled by H. Liddel and R. Scott, (այսուհետև՝ GEL), Oxford, t. II, 1951, p. 1573, հմմտ. GPV, p. 332), իսկ երկրորդն առնչվում է հին հունարեն Ρα անվան հետ, որը նաև Վոլգա գետի անունն էր և սկյութական ծագում ունի։ Ρᾶ անվան հետ առնչվող «Ռահ» գետ է հիշատակվում նաև Հայաստանում (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 78)։ Հնարավոր է, որ Պարթևաստանում մի որևիցէ գետ այդպես կոչվեր (ինչպիսին հանդիպում ենք Վենդիդատի տեքստում) և անունը փոխանցվեր տվյալ բնակավայրի վրա, ինչպես, օրինակ, Փայտակարանում Բաղանոտ գետի անունով է կոչվել ոչ միայն դրա ափին գտնվող Բաղանոտ ավանը, այլ նաև Բաղան-ոտ (Ոտ-ի Բաղա) գավառը (նույն տեղում, էջ 43)։

14 Կարող է ծագած լինել սանսկրիտի supta-ից, որ նշանակում է «քնած» (Т. Баррой, Санскрит, М., 1976, стр. 73)։ Այդ իմաստով Σοῦφα-ն կարող էր «քնողների» աղանդին պատկանող տաճարային վայր լինել։ Ուշագրավ է, որ Անարիակա քաղաքի կապակցությամբ Ստրաբոնը խոսում է քնողների աղանդի մասին (Strabo, XI, 7, 1)։

15 Տոմաշեկը տեղադրում է Ապամեայի և Χαραξ-ի մոտ, Հրևից հարավ-արևելք, Քալահ-Առիջի փլատակների տեղում (PW, II_1, 1895 (1965), էջ 375)։ Նույնանուն բնակավայր պետք է լիներ նաև այժմյան Արաք բնակավայրի տեղում, Ամրուդակից քիչ հյուսիս։ Ինչպես երևում է, այդ անունով կարող էր մի քանի բնակավայր լինել։ Ἀρακιανα տեղանվան հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած է arakya «գետ» (GPV, էջ 266) բառը։ Կարելի է հայերենում բազմաթիվ տեղանուններ նշել, որոնց հիմքում ընկած է «գետ» բառը՝ Գետառու, Գետիկ և այլն։

16 Δορδοσμανα բնակավայրը Տոմաշեկը տեղադրում է Պարթևքի հյուսիսային մասում (PW, V_2, 1905 (1958), էջ 1551)։ Տեղանունը բաղկացած է Δορ (որն ըստ առասպելական ավանդության Հելլենի որդին և դորիացիների էպոնիմն էր) և δομα (=δωμα, որը նշանակում է «տուն») բառերից, իսկ -να մասնիկն ընդհանրապես բնորոշ է իրանական տեղանուններին (տե՛ս Э. А. Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, стр. 132. Տե՛ս նաև М. А. Дандамаев, Работники царского хозяйства в Иране в конце VI—первой половине V в. до н. э., ВДИ, 1973, № 3, стр. 7)։ Այսպիսով, Δορδοσμανα բառացի նշանակում է «դորիացիների տուն», որը պետք է հասկանալ որպես բնակավայր՝ հիմնված հույների մի զորախմբի կողմից։

17 Անվան ստուգաբանությունը («հարյուրադուռ պալատ» կամ «մայրաքաղաք») տե՛ս В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 129։ Այս քաղաքի տեղադրության վերաբերյալ երկար ժամանակ տարբեր կարծիքներ են եղել (W. Tomaschek, Zur historischen Topographie von Persien, SBAW, Wien, Bd. CII, H. I, 1883, S. 223: Р. Фрай, Наследие Ирана, М. 1972, стр. 250, Lexicon der Antike, Leipzig, 1972, S. 228 և այլն)։ Անտիկ հեղինակների հաղորդումների (Diod., XVII. Quintus Curt. Rufus, VI, 4, 2—7. Arrian., III, 23, 2. Plin., VI, 29, 1 և այլն։ Հետազոտություններից տե՛ս A. D. Mordtmann, Hekatompylos. Ein Beitrag zur vergleichenden Geographie Persiens, SBAW, München, Bd, I, 1869, 4, S. 497—536) համադրումը հնագիտական պեղումներից ստացված տվյալների հետ Ջ. Հանամանին և Դ. Ստրոնաքին բերել է այն ճիշտ եզրակացության, որ Հեկատոմպյլոսը գտնվել է այժմյան Շահր-ի Քումիս (Քուշեհից 4,8 կմ

հյուսիս-արևելք) բնակավայրի տեղում (J. Hansman, նշվ. աշխ., էջ 118։ J. Hansman and D. Stronach, Excavations at Shahr-i Qumis, 1967, JRAS, 1970, № 1, pp. 29—62)։ Այժմ մասնագետներն ընդունում են այդ տեղադրությունը (տե՛ս Г. А. Кошеленко, Родина парфян, М., 1977, стр. 32; Նույնի՝ Греческий полис..., стр. 127—128)։

18 Σίνδαγα անունով բնակավայր Ստրաբոնը հիշատակում է Հնդկաստանում (Strabo, XV, 1, 33)։ Տե՛ս նաև PW, III A_1, 1927 (1972), էջ 233)։ Այս բնակավայրը ամենայն հավանականությամբ կապված է հնդկական քաղաքաշինության հետ։ Պարզված է, որ Հնդկաստանի և Միջին Ասիայի միջև փոխադարձ մշակութային, քաղաքաշինական և այլ ազդեցություն գոյություն ուներ (Б. А. Литвинский, Древний среднеазиатский город, сб. „Древний Восток", Ереван, 1975, стр. 125)։ Նման ազդեցություն պետք է լիներ նաև Իրանի արևելյան շրջանների վրա, որի վկայությունն է Պտղոմեոսի հիշատակած բնակավայրը։

19 Պտղոմեոսի կողմից հիշատակվող անունների մեջ Παρβαρα-ն համահնչյուն է պահլավերեն parvar բառին. par—պար, շուրջ (GPV, էջ 478) + var — ցանկապատված վայր, քարանձավ (GPV, էջ 34)։ Ավեստայի Վիդևդատում vāra-ն նկարագրված է որպես բնակատեղի (տե՛ս В. Лившиц, История таджикского горова, т. I, М., 1963, стр. 145։ Նույնի՝ Древний среднеазиатский город, стр. 108—109)։ Vara նշանակում է «բոլոր կողմերից բաց աշտարակ» (Ռ. Թ. Աբրահամյան, Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965, էջ 220), կամ «ամեն կողմից ցանկապատված ամառանոց»։ Նմանօրինակ գավառ է հիշատակվում «Աշխարհացոյցում». «Եւ դառնայ [Կուր] յարեւելս՝ անցանելով ընդ Վերին աշխարհ Վրաց, բաժանելով զգաւառսն. զԹոր, զԴոռաթխուխեւ, զՏանիսխեւ, որոյ ի գլուխն Դեկից[ի]խէ բերդ, եւ զՄանգլեաց փոր, և [զՔուիշափոր] եւ զԲողնոփոր՝ մինչև զՊարուար գաւառ, որ պատէ զՏփղիս քաղաքաւ, բայց երեք փորակդ ի Հայոց հանեալ է» (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», էջ 104)։

20 Այս քաղաքը (Ամմիանոսը նույնպես Պարթևքում հիշատակում է Moesia, Ammian. Marc., XXIII, 6, 43), ըստ երևույթին, հիմնադրվել է թրակացիների այն ցեղի կողմից, որ Ստրաբոնի ժամանակ մյուսիացիներ էր անվանվում (Strabo, XII, 3, 3)։ Փոքր Ասիայում այս անունով և՛ քաղաք (Strabo, VIII, 3, 31), և՛ շրջան կար Տրոադային սահմանակից (Strabo, XII, 3, 2, XIV, 5, 29)։

Հին Արևելքում հելլենիստական քաղաքաշինության մասին վերջին հետազոտություններից տե՛ս Г. А. Кошеленко, К оценке достоверности античной традиции об эллинистическом градостроительстве на Востоке (на примере Мидии, Гиркании, Парфии), КСИА АН СССР, № 136, 1973, стр. 23—29։

21 Անունը (χάραξ — ցանկապատ, GEL, հատ. II, էջ 1977) թելադրում է, որ այս բնակավայրը նույնպես ինչ-որ չափով կապված է հունական միջավայրի հետ։ Միայն պարթևական Իրանում երեք քաղաք է եղել այդ անունով (Isid., I, VII. Plin., XXXI, 142. Ptol., VI, 3, 2)։ Պտղոմեոսի կողմից Պարթևքի նշված տարածքում հիշատակած բնակավայրը (տե՛ս նաև Ammian. Marc., XXIII, 6, 43), ինչպես վերը նշեցինք, համապատասխանում է Ռագիական Մեդիայում Իսիդորի հիշատակած Χάραξ-ին (Isid., VII), որի տեղում միջին դարերում գտնվում էր Արադի քաղաքը (տե՛ս В. В. Бартольд, նշվ. աշխ., էջ 131)։

22 Քաղաքը գտնվում էր Ռագայի մոտ (Strabo. XI, 13, 6. Plin., VI, 43)։ Հին աշխարհում 'Απάμεια անունով քաղաքները բազմաթիվ էին։ Ապաման, որի անունով անվանվում էին այդ քաղաքները, Անտիոքոս Սոտերի (281—261) մայրն էր, Արտաբազի դուստրը, ամուսնացած Սելևկոս Նիկատորի հետ (312—280) (Strabo, XII, 8, 15)։ Սելևկոս Նիկատորը և, առավել ևս, նրա որդին՝ Անտիոքոս Սոտերը, Իրանի արևելքում բուռն շինարարական գործունեություն էին ծավալել, որը նրանց քաղաքական ծրագրերի մի մասն էր կազմում։ Պտղոմեոսի հիշատակած այս քաղաքը համապատասխանում է Իսիդորի կողմից Խոարենեում (որը Պտղոմեոսի կողմից նկարագրած Պարթևաստանի մի մասն էր կազմում) հիշատակված Ապամեային (Isid., VIII)։ Նմանօրինակ քաղաքներ հիշատակելիս Ստրաբոնը նշում է, որ դրանք հիմնադրել էին մակեդոնացիները (Strabo, XI, 13, 6)։

23 "Ասպա անվանմանը, որը իրանական ծագում ունի, հայերենում համապատասխանում է «ասպ» արմատը, որը մասնակցում է բարդ բառերի կազմմանը։ Հ. Աճառյանը գրում է. «-պհլ. asp», «ձի» բառից փոխառեալ. միւս ցեղակիցներն են հպրս. asa, զնդ. aspa (Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 1, Երևան, 1971, էջ 270, հմմտ. Э. А. Грантовский, նշվ. աշխ., էջ 122, 133—134)։ Ասպան կարող էր ձիաբուծության և ձիու պաշտամունքի կենտրոն լինել և գտնվել Ռագայի դաշտավայրում, որը հայտնի էր ագնվացեղ ձիերով (Strabo, XI, 13, 7)։ Նմանօրինակ տեղանունների շարքին կարելի է դասել նաև Իսպաբարան (Իսպաւառա, Ispabara-Aspabara, նույն տեղում), Ասպաքոտան (Ammian-Marc., XXIII, 6, 63. հմմտ. Hippobotos Մեդիայում, Strabo, XI, 13, 7), «Ասպակունեաց ձոր» գավառը (Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 38, 107), Ասպիոն՝ Մեդիայում (Ptol., VI, 2, 10), Փասպա-ն՝ Պարսքում (Ptol., VI, 4, 4), 'Ասպասանա-ն Բակտրիանայում (Ptol., VI, 11, 7), Ζαρί[α]σπα-ն Դրանգիանայում (Ptol., VI, 19, 5), Ասպիստանը, այսինքն՝ «Ձիերի երկիրը», որը ինչպես գրում է Ն. Ադոնցը, այդպես էր կոչվում «անշուշտ ձիերի բուծման պատճառով, որը գտնվում էր Զարի հովտում, Դերբենդից և Սուրբ Բարթուղիմեոս հայկական վանքից քիչ հեռու» (Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 359) և այլն։ Կարելի է ենթադրել, որ այդ վայրերից մի քանիսը եղել են նաև ձիու պաշտամունքի կենտրոններ։ Հիմնվելով Հերոդոտոսի վկայության (մասսագետների հավատալիքների կապակցությամբ) և այլ անտիկ հեղինակների, ինչպես նաև հնագիտական նյութերի վրա՝ հետևություն է արվել, որ սերտ կապ գոյություն ուներ ձիու, Արևի և Ահուրա-Մազդայի մասին եղած պատկերացումների միջև (Б. А. Литвинский, Древние кочевники „Крыши мира", М., 1972, стр. 151—152, 155)։

24 Σήμνα բնակատեղին, ինչպես ճիշտ նշում է Տոմաշեկը, ժամանակակից Semnān-ն է (PW, 1923 (1972), IIA_2, p. 1347)։

25 Հմմտ. Maria (Plin., VI, 29, 1)։

26 Այս տեղանունը պահպանվել է այժմյան Արմիան-Զուդանեկում լեռների (2687 մետր) և դրա լանջին գտնվող Էրմիան քաղաքի անուններում։

27 Χόαρα բնակավայրը գտնվում էր Պտղոմեոսի հիշատակած համանուն Χοαρηνή նահանգում։

28 Πασακαρτια տեղանունը հնարավոր է, որ պահլավերենում եղել է Pasakart, pas= «պահ», «պահակ» (GPV, էջ 472։ Տե՛ս նաև՝ Ռ. Թ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 206)+kart «շինված», «պատրաստված» (GPV, էջ 382)։ Թերևս անվան զուգահեռը հայ մատենագիրների կողմից հիշատակվող Պահակն (Ծորայ) անվանումն է, ինչպես նրանք կոչում էին Դերբենդի ամրությունները (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», էջ 76)։ Կարելի է եզրակացնել, որ Πασακαρτια-ն եղել է Պարթևքում ստրատեգիական նշանակություն ունեցող մի ինչ-որ տեղում կառուցված ամրություն։

29 Անվան զուգահեռին հանդիպում ենք Rūdhan (այժմ. Ռույան) տեղանվան մեջ (Hudūd al-'Ālam, էջ 387)։ Ռույան տեղանունը Իրանում մի շարք վայրերում է հիշատակվում։ Պտղոմեոսի հիշատակածը պետք է վերաբերի Շահրուդից հարավ ընկած այժմյան Ռույանին։ Կարծում ենք, որ ինչպես 'Ροῦσα-ի, այնպես էլ Rūdhān-ի հիմքում ընկած է ruddha (=«փակված», տե՛ս Г. Варрау, նշվ. աշխ., էջ 87) բառը, որն իրաներենին է անցել հնագույն ձևով։

30 Պարթևքում հիշատակվող հաջորդ՝ 'Αρταχανα տեղանվան հիմքն է հին իրանական Arta-ն։ Այն զրադաշտական կրոնի բարու գաղափարն էր արտահայտում (И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 373)։ Նմանօրինակ տեղանվան տարբերակներին հանդիպում ենք Արիքի մի տեղանվան կապակցությամբ. 'Αρταχάηνα, 'Αρταχάσαν, 'Αρταχσανα, Artacana, 'Αρταχαῦανα (Strabo, XI, 10, 1. Isid., XV, Arrian., Exp., III, 25, 5, 6, Ammian. Marc., XXIII, 6, 43. Plin., VI, 25)։ Այս անուններում տարբեր ձևով, որպես վերջածանց, արտահայտվել է պահլավերենի āvahan բառը («գյուղ, ավան» տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 353)։

31 Պարթևքում Պտղոմեոսի կողմից հիշատակվող վերջին տեղանունը 'Ράγαια-ն է, որը լավ հայտնի է անտիկ աղբյուրներից (օրինակ՝ Isid., VII և այլն)։ Ստրաբոնը նշում է, որ

«Ռագա» անունը, պատմաբան Դուրիս Սամոսացու (շուրջ 350 թ. մ. թ. ա.) վկայությամբ տրվեց Մեդիայի Կասպիական դռների մոտ գտնվող շրջանին այն պատճառով, որ երկիրն այստեղ «ճեղքվեց» (ῥαγας, «ճեղքվածք գետնի մեջ», GEL, հատ. II, էջ 1563) երկրաշարժի հետևանքով և շատ քաղաքներ ու բնակավայրեր ավերվեցին (Strabo, I, 3, 15)։ Ըստ Պոսեյդոնիոսի (մ. թ. ա. 135—51), այդ երկրաշարժի հետևանքով 2000 բնակավայր ավերվեց։ Սակայն այս ստուգաբանության ելակետը հունարենն է։ Այնինչ, Ավեստայի Վիդևդատի առաջին գլխում, որ կազմվել է ավելի վաղ ժամանակներում քան Զարատուշտրայի ժամանակաշրջանը (մոտ VII—VI դդ. մ. թ. ա.) Ռագան թվարկվում է այլ երկրների շարքում (М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, стр. 361): Raga տեղական բացատրությամբ նշանակում է «հարթավայր, սարահարթ» (И. М. Дьяконов и В. А. Лившиц, Документы из Нисы I в. до н. э., М., 1960, стр. 29, 89)։ Ակնհայտ է, որ Ստրաբոնի հաղորդման մեջ իրանական անվանումը ստուգաբանվել է հունարենի միջոցով։

Կասպիական դռներից մինչև Ռագա, ըստ Ապոլլոդորի, 500 ստադիոն է (Strabo, XI, 9, 1)։ Ստրաբոնի վկայության համաձայն Ռագան հիմնել է Սելևկոս Նիկատորը (մ. թ. ա. 312—280) և անվանել Եվրոպոս, իսկ պարթևները այս անվանում էին Արսակիա (նույն տեղում, XI, 13, 6)։ Ամմիանոսը դրանք չի նույնացնում (Ammian. Marc., XXIII, 6, 39)։ Պետք է կարծել, որ Ռագայի հին ավերակների տեղում է Սելևկոսը հիմնադրել, ավելի ճիշտ կլինի ասել՝ վերաշինել այդ քաղաքը։

ПАРФИЯ ПО ПТОЛЕМЕЮ

Кандидат историч. наук Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

Птолемей (ок. 83—161 гг.) описывает Парфию и составляющие ее области со всеми подробностями картографического характера. В описываемых пределах Парфия на западе доходила до отмечаемой Исидором Харакским Верхней Мидии, включая Рагийскую Мидию, насколько можно судить по упоминаемым Птолемеем городам Рага и Харакс. На севере Парфия граничила с Гирканией по горе Коронос (совр. Эльбурс), на востоке с Арией по горе Масдоранос (совр. Муздеран), на юге с Пустынной Карманией. Из столиц Парфянского государства Птолемей здесь упоминает Гекатомпилы, а Экбатаны и Ктесифон—в отдельно описываемых им соответственно Мидии и Ассирии. Птолемей описывает Парфию в тех пределах, которые она имела до территориальных завоеваний парфянского царя Митридата I (171—138 гг. до н. э.) в конце 50—начале 40-х гг. II в. до н. э. В дальнейшем, в составе всего Парфянского государства, Парфия Птолемея должна была соответствовать одной из крупных политико-административных единиц.